ՄՆԱՅՈՒՆ ԱՐԺԵՔ

Ռ.Միրզախանյան, Հ. Հակոբյան. *Սոցիալիստական ռեալիզմը և խորհրդահայ կերպարվեստը, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2014, 523 էջ:*



Միայն մարդուն է բնորոշ հիշողության դաշտը, որը լցվում է որոշակիորեն իմաստավորվող անցյալով: Որքան շատ ու բազմակողմանիորեն իմաստավորված լինի հիշողության նյութը, այնքան հիմնավոր՝ կլինի նաև անհատական ու ազգային ինքնության գիտակցումը և արժևորումը: Մինչդեռ հաճախ մեզ լրջորեն հաշիվ չենք էլ տալիս այդ գործընթացում այն էական նշանակությանը, որն ունեն անցյալի արժեքները: Դրա պատճառները մանավանդ մեր օրերում և կենսական հանգամանքներում իհարկե շատ են ու ցավալիորեն ներգործուն:

Հայոց նորագույն աշխարհընկալմանը հաճախ բնորոշ է մանավանդ խորհրդային շրջանի հատկապես հոգևոր արժեքների նկատմամբ քամահրական վերաբերմունքը: Սակայն հավասարակշիռ մոտեցումը մեր ազգային պատմության այդ անշրջանցելի ժամանակաշրջանի մեջ լրջագույն կորուստների կողքին կհայտնաբերի նույնիսկ միջազգային նշանակություն ու ճանաչում ունեցող արժեքներ: Նորից նշեմ, որ հենց այդ արժեքներին անվերապահորեն տեր լինելը միայն բարոյական խնդիր չէ: Դա է միջոցներից մեկը, որով կարող ենք բարձր որակներով լցնել մեր նոր իրականությունը, կյանք մտնող սերնդին ճիշտ ուղղորդել իր հոգևոր նկարագրի ձևավորման դժվարին գործընթացում:

Ահա այդ նպատակն ունեցող արժեքավոր ու գնահատելի նախաձեռնության արդյունք պետք է համարել օրերս լույս տեսած պատկերագիրքը՝ □Սոցիալիստական ռեալիզմը և խորհրդահայ կերպարվեստը□: Այն խորհրդահայ կերպարվեստի շատ կամ պակաս հայտնի ներկայացուցիչների ստեղծագործությունների նորովի մոտեցման հաջողված ու ինքնատիպ օրինակ է: Պատկերագրքի ընդգրկումը երևելի է՝ խորհրդահայ (1920-80-ական թթ.) կերպարվեստի (գեղանկար, գրաֆիկա, քանդակ) գունավոր վերատպություններ: Այն ավելի է կարևորվում, երբ հաշվի ենք առնում, որ ներկայացված են նաև այնպիսի արժեքավոր ստեղծագործություններ, որոնք ինչ-ինչ պատճառներով ցայսօր աննկատ են մնացել:

Գիրքը բացվում է նախաբանով, որի հեղինակներն են ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը և ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանը:

Հարկ եմ համարում անպայման նշել պատկերագրքի առաջաբանի կարևորության հանգամանքը: Այն բավական ծավալուն է և ընթերցողին մանրամասն տեղեկություն է տալիս ինչպես ներկայացված գործերի ստեղծագործական մեթոդի ծագման ու ձևավորման, այնպես էլ աշխատության տպագրության նպատակի, ընդգրկած նյութի ընտրության սկզբունքների, խորհրդահայ կերպարվեստի, ներկայացված ստեղծագործությունների անցած ուղու մասին:

Պատկերագրքի առաջաբանի կարևոր արժեքներից մեկն էլ խորհրդահայ մշակույթի մի ոլորտի հետահայաց արժևորման մեջ հեղինակների մտահղացման պատճառաբանվածությունն է: Դա բնատուր օժտվածության և պրոֆեսիոնալիզմի հակադրությունն է մեր օրերում անկասելիորեն ծաղկող չափանիշների անկայունությանը, արտաքին ու ներքին անցանկալի ազդեցություններին, անխոհեմաբար մեծարվող սիրողականությանը և պարզունակ ընդօրինակմանը: Աշխատությունը ինչ-որ առումով նաև մարտահրավեր է մերօրյա ստեղծագործողներին: Եղածը ժխտելը կամ արհամարհելը հեշտ է. դժվարը կայացած ու ճանաչված վաստակ ունենալն է: Խորհրդահայ կերպարվեստը ներկայացվում է Մ. Սարյանի, Հ. Կոջոյանի, Փ. Թերլեմեզյանի, Ե. Քոչարի, Մ. Ավետիսյանի, Գ. Խանջյանի, վաստակաշատ այլ արվեստագետների անուններով: Ի՞նչ են հավելել նորերն այս անունների վաստակի վրա, ինչո՞ւմն է իրենց ճանաչելի ու գնահատելի անհատականությունը...

Ահա այն կարևորագույն և արդիական հիմնախնդիրներից մեկը, որն առաջադրում է պատկերագիրքն իր հետահայաց արժևորման սկզբունքայնությամբ:

ԱՂԱՋԱՆՅԱՆ Ս.Ա.
Բանասիրական գիտությունների դոկտոր